Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland
His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ
Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Registered Charity No 1173403
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading, 20th December 2020 Bulletin 51/2020

Fifth Sunday of Advent

ԹՈՒՂԹ ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻՆ 4:16-5:10

Ուրեմն համարձակութե՛մբ մօտենանք շնորհքի գահին, որպէսզի ողորմութիւն ստանանք եւ շնորհք գտնենք՝ պատեհ ատեն օգնելու մեզի:

Արդարեւ, մարդոց մէջէն առնուած ամէն քահանայապետ՝ նշանակուած է մարդո՛ց համար, որպէսզի Աստուծոյ մատուցանէ ընծաներ ու մեղքերու համար զոհեր: Ան կրնայ հասկացող ըլլալ անոնց՝ որ անգէտ եւ մոլորեալ են, որովհետեւ ի՛նք ալ համակուած է տկարութեամբ. եւ այս պատճառով պարտաւոր է մեղքի պատարագ մատուցանել՝ ինչպէս ժողովուրդին համար, նոյնպէս ալ իրեն համար: Ո՛չ մէկը ինքնիրեն կ'առնէ այս պատիւը, հապա միայն ա՛ն՝ որ կանչուած է Աստուծմէ, ինչպէս Ահարոն:

Նոյնպէս ալ ո՛չ թէ Քրիստո՛ս փառաւորեց ինքզինք՝ քահանայապետ ըլլալու համար, հապա ա՛ն՝ որ ըսաւ իրեն. «Դուն իմ Որդիս ես, ա՛յսօր ծնայ քեզ»:

Ինչպէս ուրիշ տեղ մըն ալ կ'ըսէ. «Դուն յաւիտեան քահանայ ես՝ Մելքիսեդեկի կարգին համեմատ»:

Ան՝ իր մարմինին օրերը, սաստիկ գոչիւնով եւ արցունքով, աղերսանք ու պաղատանք մատուցանեց անոր՝ որ կարող էր մահէն փրկել զինք. եւ ընդունուեցաւ՝ իր բարեպաշտութեան պատճառով՝: Թէպէտ ինք Որդի էր, հնազանդութիւն սորվեցաւ իր չարչարանքներէն. ու երբ կատարեալ եղաւ, յաւիտենական փրկութիւն պատճառեց բոլոր իրեն հնազանդողներուն, եւ Աստուծմէ յորջորջուեցաւ՝ Քահանայապետ Մելքիսեդեկի կարգին համեմատ:

Hebrews 4:16-5:10;

Let us then approach God's throne of grace with confidence, so that we may receive mercy and find grace to help us in our time of need.

Every high priest is selected from among the people and is appointed to represent the people in matters related to God, to offer gifts and sacrifices for sins. He is able to deal gently with those who are ignorant and are going astray, since he himself is subject to weakness. This is why he has to offer sacrifices for his own sins, as well as for the sins of the people. And no one takes this honour on himself, but he receives it when called by God, just as Aaron was.

In the same way, Christ did not take on himself the glory of becoming a high priest. But God said to him,

"You are my Son; today I have become your Father." [a]

And he says in another place,

"You are a priest forever, in the order of Melchizedek." [b]

During the days of Jesus' life on earth, he offered up prayers and petitions with fervent cries and tears to the one who could save him from death, and he was heard because of his reverent submission. Son though he was, he learned obedience from what he suffered and, once made perfect, he became the source of eternal salvation for all who obey him and was designated by God to be high priest in the order of Melchizedek.

Our Aim;
St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 18:9-14

Սա՛ առակն ալ ըսաւ ոմանց, որոնք իրենք իրենց վրայ կը վստահէին թէ արդար են, եւ կ՚անարգէին ուրիշները. «Երկու մարդ տաճարը բարձրացաւ աղօթելու, մէկը՝ Փարիսեցի, ու միւսը՝ մաքսաւոր: Փարիսեցին կայնած էր եւ սա՛պէս կ՚աղօթէր ինքնիրեն. “Ո՛վ Աստուած, շնորհակալ եմ քեզմէ՝ որ ուրիշ մարդոց պէս չեմ, յափշտակող, անիրաւ, շնացող, կամ ալ այս մաքսաւորին պէս. հապա շաբաթը երկու անգամ ծոմ կը պահեմ, եւ ամբողջ եկամուտիս տասանորդը կու տամ”: Իսկ մաքսաւորը հեռուն կայնած էր, ու չէր ուզեր աչքն ալ բարձրացնել երկինք, հապա՝ ծեծելով իր կուրծքը՝ կ՚ըսէր. “Աստուա՛ծ, ներէ՛ ինծի՝ մեղաւորիս”: Կը յայտարարեմ ձեզի թէ ասիկա այն միւսէն աւելի արդարացած իջաւ իր տունը. որովհետեւ ո՛վ որ կը բարձրացնէ ինքզինք՝ պիտի խոնարհի, իսկ ո՛վ որ կը խոնարհեցնէ ինքզինք՝ պիտի բարձրանայ»:

The Holy Gospel of Jesus Christ according to Luke 18:9-14

The Parable of the Pharisee and the Tax Collector

To some who were confident of their own righteousness and looked down on everyone else, Jesus told this parable: “Two men went up to the temple to pray, one a Pharisee and the other a tax collector. The Pharisee stood by himself and prayed: ‘God, I thank you that I am not like other people—robbers, evildoers, adulterers—or even like this tax collector. I fast twice a week and give a tenth of all I get.’

“But the tax collector stood at a distance. He would not even look up to heaven, but beat his breast and said, ‘God, have mercy on me, a sinner.’

“I tell you that this man, rather than the other, went home justified before God. For all those who exalt themselves will be humbled, and those who humble themselves will be exalted.”

Pharisee and Publican

Ս. Աբգար նախավկայի և Քրիստոսին հավատացող մեր անդրանիկ թագավորի հիշատակության օր

Աբգար հայոց արքան աստվածասեր և մեծահավատ էր՝ ըստ մարմնի թագավորակից Քրիստոսին, որովհետև Քրիստոս ծնվեց Ս. Կույս Մարիամից Աբգարի թագավորության առաջին տարում և 30 տարի հետո մկրտվեց Հորդանան գետում Հովհաննեսից:

Աբգարը, լսելով նրա մասին, անմիջապես հավատաց Նրան՝ թողնելով կռապաշտությունը: Եվ քանզի թագավորը հիվանդ էր բորոտությամբ, և չկար բժշկության հնար, Աբգարն ուղարկեց Անանեին՝ իր փառավոր նախարարին՝ ապահունիների իշխանին, նրա հետ 10 պատվավոր մարդկանց՝ մեծագին ընծաներով և նվերներով: Նաև գրեց Հիսուսին իր հավատի խոստովանության նամակը և աղաչեց գալ՝ բժշկել նրան չարաչար ցավից և լինել իր հետ: Անանեի հետ ուղարկեց Հովհաննես անունով մի նկարչի, որ եթե չկամենա Հիսուսը գալ արքայի մոտ, նկարեն Նրա պատկերը և բերեն իրեն:

Անանեն եկավ, հասավ Երուսաղեմ Ծաղկազարդի օրը, երբ Հիսուս իջավ Ձիթենյաց լեռի գառիվայրերով Գեթսեմանի, այնտեղից ելավ ավանակով Երուսաղեմ քաղաքը և գնաց մտավ Սողոմոնի տաճարը: Ելնելով տաճարից՝ Հիսուս գնաց Գամաղիել օրենուսույց վարդապետի տունը, ով Նիկոդեմոսի՝ Հիսուսի գաղտնի աշակերտի, եղբայրն էր, որովհետև Գամաղիելը մեծարեց Հիսուսին և տարավ Նրան տաճարից իր տունը: Անանեն ուղարկեց պատվավոր յուրայիններին Հիսուսի աշակերտների մոտ՝ հարցնելու նրանցից, թե «ինչպե՞ս տեսնենք Քրիստոսին»: Ըստ Հովհաննես (Ավետարանչի), որ ասում է. «Կային այնտեղ ոմանք հեթանոսներից, որ եկան Երուսաղեմ և մոտեցան Փիլիպոսին ու ասացին. «Տե՛ր, կամենում ենք Հիսուսին տեսնել»: Փիլիպոս ասաց Անդրեասին: Անդրեասն ու Փիլիպոսը ասացին Հիսուսին և տարան նրանց Հիսուսի մոտ: Անանեն և յուրայինները տեսան Հիսուսին առաքյալների հետ Գամաղիելի տանը: Հիսուս ընդունեց նրանց ուրախությամբ և ասաց. «Հասավ ժամը, որ փառավորվի մարդու Որդին»: Անանեն ոտքի կանգնեց, տվեց նամակը, երկրպագեց և Հիսուսին փոխանցեց արքայի ողջույնը: Հիսուս օրհնեց Աբգարին և նրա թագավորությունը, հրամայեց Թովմային նրան պատասխան գրել, երանի տվեց Աբգարին նրա հավատի համար և ասաց. «Փոքր-ինչ ժամանակ եմ աշխարհում, ապա կվերանամ երկինք՝ Իմ Հոր մոտ: Այնժամ կուղարկեմ քեզ մոտ Իմ աշակերտներից մեկին՝ կյանք տալու համար քեզ և ովքեր քեզ մոտ են»: Հիսուս օրհնեց նաև այն պատկերը, որ նկարել էր Աբգարի սուրհանդակը: Այն բերեցին և տվեցին Աբգարին՝ փոխանակ Տիրոջ: Տեսնելով այն՝ բարեպաշտ արքան ուժգին բերկրեց և համբուրեց ջերմեռանդ սիրով ու հաստատուն հավատով, որով այնժամ առողջացավ կես մարմնով: Աբգարը համարեց, թե տեսավ Քրիստոսին մարմնով:

Քրիստոսի համբարձումից և Հոգեգալուստից հետո, զինված գեղարդով և Ս. Հոգով՝ Թադեոս առաքյալը եկավ Տուբա հրեայի տունը և բժշկեց նրան (որովհետև մահճին գամված էր իր հիվանդությամբ): Աբգարը, լսելով դրա մասին, ասաց, թե. «Սա նա է, որին խոստացավ ուղարկել ինձ Քրիստոս» և, ուղարկելով նրա ետևից, կանչեց իր մոտ Ս. առաքյալին: Երբ Թադեոսը մտավ Աբգարի մոտ, արքան, վեր կենալով իր գահից, երկրպագեց Թադեոսին և օրհնություն խնդրեց առաքյալից, քանզի սքանչելի նշան տեսավ նրա երեսին և ոսկե թագ Թադեոսի գլխին, ինչպես թագավորի մոտ: Թադեոսը, ձեռքը դնելով թագավորի գլխին, Քրիստոսի անվամբ փարատեց նրանից բորոտության ցավը: Ապա մկրտելով թագավորին՝ բոլորովին բժշկեց նրան չար հիվանդությունից: Նույնպես և բոլոր քաղաքացիները հավատացին Քրիստոսին և մկրտվեցին:

Առաքյալը կառուցեց եկեղեցիներ, ձեռնադրեց քահանաներ և պաշտոնյաներ: Ձեռնադրեց եպիսկոպոս Ադդե կերպասագործին՝ Քրիստոսի 70 աշակերտներից, և թողեց նրան իր փոխարեն քաղաքի առաջնորդ: Իսկ ինքը՝ առաքյալը, վերցնելով Աբգար արքայից հրովարտակներ, որպեսզի ամեն ոք հնազանդվի Քրիստոսի ավետարանին Թադեոսի քարոզությամբ, շարժվեց դեպի Վերին Հայք, Սանատրուկ արքայի մոտ, ով Աբգարի քրոջ որդին էր:

Աստվածասեր Աբգար թագավորը եղավ առաքելաբար Ավետարանի պատմողը. նշաններ և բժշկության հրաշքներ էր գործում: Գրեց նամակ Հռոմի կայսեր Տիբերիոսին, որպեսզի նա հրաման տա իր տերության բոլոր գավառներում պաշտել Աստծուն՝ Հիսուս Քրիստոսին՝ ծնված Բեթղեհեմում Ս. Կույս Մարիամից, ով անարգվեց Պիղատոսից և խաչվեց հրեաների կողմից: Նույն նամակը Աբգար թագավորը գրեց պարսից Արշավիր արքային՝ իր ազգականին և հանձնարարեց նրան ընդունել Սիմոն Կանանացուն, նույն ինքը Ծմավոն նախանձահույզին՝ Հովսեփի որդուն և Հակոբոս Տեառնեղբոր եղբորը: Թագավորը նրան հանձնեց Արշավիր արքային, որպեսզի լսեն առաքյալի քարոզը: Բաբելացիների Ներսեհ մանուկ արքային նույնպես գրեց Աբգարը՝ հնազանդ լինել Ավետարանի քարոզին և պաշտել Քրիստոս Աստծուն: Եվ այնպես հոժարությամբ հոգ էր տանում բարեպաշտ Աբգարը՝ ամենուր Քրիստոսի արքայությունը քարոզելու համար, որպեսզի Քրիստոսի Ավետարանի քարոզը ընդդիմության չհանդիպի:

Քրիստոսին հավատացող հեթանոս թագավորներից առաջինը և բոլոր քրիստոնյա թագավորների անդրանիկը՝ բարեպաշտ Աբգար թագավորը, իր կյանքը և թագավորությունը այսպես կարգավորելուց հետո, առաքինի կյանքով ապրած և պլևորության հասած, հանգեց ի Քրիստոս և փոխադրվեց անանց թագավորություն դեկտեմբերի 31-ին:

Commemoration of St. Abgar, First Martyr of the Church and our first king believing in Christ

According to the tradition St. Abgar was the first Christian king of the 1st century, the son of the Parthian king Arshakunie Arsham. He was also called “senior man” as he was the wisest of all and of genius. Historian Moses of Khoronk, Assyrian historian Labubnia of Yedessia, Greek historians Procopis and Yeusebius have told about the king Abgar. He built the city of Yedessia in the site where the Armenian army protected the ford of the river Euphrates from the Roman captain Casius. Later the king moved the royal palace and all idols from Nisibis to that city.

It is during the period of reign of the king Abgar that Jesus Christ, the Saviour of the world, was born. And Abgar, who was incurable, becoming aware of the wonders worked by Christ, believed in Christ and by means of his delegates sent a letter-petition to Jerusalem, to the Savior, asking Him to come and heal him. In the response letter it was said, that Christ still had important things to do in Jerusalem, but He should send one of His disciples to the king to heal him. After the Ascension of the Savior Apostle St. Thaddeus came to Yedessia, healed the king Abgar, the sick, preached the Gospel and appointed Adde, the silk-weaver, to be his successor. Jesus had sent his portrait to Abgar and it was kept for a long time in Yedessia, and later in the churches of various cities and towns.

After that the king Abgar sent letters to the king Tiberius and the king Nerseh of Assyria exhorting them to admit Jesus Christ as the Son of God and the Saviour.

The king Abgar passed away probably in the first half of the 1st century.

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

ԱՊԱՒԻՆՈՒՄ ԵՆՔ ՄԵՆՔ ԱՍՏԾՈՒՆ

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն

«Նրանք, որոնք Տիրոջն են ապաւինում, նոր ուժ պիտի ստանան եւ նոր փետուրներով զարդարուեն ինչպէս արծիւներ, պիտի վազեն, բայց չպիտի յոգնեն, պիտի գնան, բայց քաղց չպիտի զգան» (Ես. 40:31):

Աստծուն ապաւինող եղբայրնե՛ր եւ քոյրե՛ր,

Ապաւինութիւնը անվերապահ հաւատքն ու վստահութիւնն է, ամէն պարագայի մէջ իբրեւ հենարան ունենալն է: Բառարանային քննութիւնն այլ նուրբ շերտ էլ է մեզ ցոյց տալիս՝ հովանավորութեան, պաշտպանութեան տակ մտնել: Մեզնից՝ առ Աստուած սէր եւ հաւատքի կեանք, Տիրոջից՝ խնամք եւ պաշտպանութիւն:

Թերեւս ոչ մի ժամանակ այսքան մեծ հնարաւորութիւններ չեն եղել՝ մարդկանց հասցնելու տեղեկատուութիւն, գաղափարներ, Աստծոյ Խօսքն ու պատգամը: Համացանցից մինչեւ միլիոններով օրինակներով հրատարակութիւններ, Աստծոյ խօսքը աշխարհի բոլոր անկիւններում փորձում են տարածել:

Բայց տեսնում ենք, որ քրիստոնէական վարքը եւ վկայութեան հոգին, Աստծուն ապաւինելու մօտեցումը համայնական կեանքում ոչ թէ զօրանում, այլ նուազում է մանաւանդ աւանդաբար իբրեւ քրիստոնեայ ճանաչուած հասարակութիւնների մէջ: Աշխարհականացման, հոգեւորից զրկման աւելի ու աւելի ահագնացող ալիքները տեսանելի են ամենուր, երբ Աստծուն ապաւինելու փոխարէն մարդիկ աւելի վստահում են դրամի ուժին:

«Չէք կարող ե՛ւ Աստծուն ծառայել, ե՛ւ մամոնային»

Արդի աշխարհում քրիստոնէութեան նկատմամբ մեծագոյն գայթակղութիւնը եւ հետեւաբար՝ վնասը գալիս է …քրիստոնեաներից: Այդ թակարդը մենք ենք մեզ համար պատրաստել՝ մեր հակասական ու երկստանդարտ մեր կենցաղով: Իբրեւ պատճառաբանութիւն բերւում է այն, որ ժամանակները տարբեր են, այժմ հնարաւոր չէ Աւետարանը նոյնութեամբ ապրել, ինչպէս հնում էին անում, որոշ հոգեւոր սկզբունքներ պէտք է զիջել, մեզ հաճելի տարբերակով մեկնաբանել եւ կենցաղավարութեան մէջ փոփոխել, բարոյական նոր մարտահրաւէրներին ոչ թէ դիմակայել, այլ յարմարուել եւ դա սէր ու հանդուրժողականութիւն կոչել՝ չանդրադառնալով, որ դրանով Աստծոյ անունն ու գործը, եկեղեցին եւ հաւատքն են անարգւում:

Դրա համար օտարներն էլ երբ տեսնում են, որ իրենց քրիստոնեայ յայտարարողները խօսքի, գործի, կենցաղի մէջ Ս.Գրքի անգամ հիմնարար, գլխաւոր սկզբունքները, օրենքներն ու պատուիրանները չեն պահպանում, սկսում են ոչ միայն անլուրջ վերաբերուել քրիստոնէական հաւատքին, այլեւ այն դիտարկում են իբրեւ մարդահնար, կեղծուած, սնոտիապաշտական, ժամանավրէպ…

«Կիսատ հաւատքը հաւասար է անհաւատութեան», - ասում է Հայոց լուսամիտ հայրապետներից սուրբ Ներսէս Շնորհալին: Այժմեան քրիստոնէական աշխարհի հոգեւոր պատկերը անյստակ, աղօտ, յարմարուող, նահանջող, շատերի որակումով՝ աւարտուող, մեռնող վիճակ է: Այս նահանջի , յարմարուողութեան ոգին նկատելի է ամենուր՝ ընդհուպ եկեղեցիներում եւ հոգեւորականների կեանքում: Սա կարծես հաւատքի կիսատութիւն է, որ միշտ կեսճանապարհին լինելու տպաւորութիւն է թողնում: Այդ պատճառով ամբողջական նուիրում, ամբողջական դարձ, ամբողջական զոջում, մեղքից ու պղծութիւնից մաքրում չի լինում: Իսկ դա ներսում միշտ պահում է մեղքի արմատը՝ կրկին դրան վերադառնալու ներքին ցանկութեամբ:

Սիրելինե՛ր, Աստուած չի փոխուել, յաւիտեան նոյնն է՝ Իր սիրով եւ ներողամտութեամբ: **«Յիսուս Քրիստոս նոյնն է երէկ, այսօր եւ յաւիտեան: Տեսակ-տեսակ եւ օտարոտի ուսմունքների մէջ մի՛ տարուբերուէք»** (Եբր. 13.8-9): Ամէն ինչ մեզանից է կախուած՝ ամբողջ սրտո՞վ Իրեն կխոստովանենք ու կմաքրուենք, թէ՞ կմնանք կիսատ՝ ձեռքը մաճին դրած ու հայեացքը ետ՝ մեր մեղքին պահած: Ամէն կիրակի մենք հոգեւոր վերափոխման հնարաւորութիւն ունենք:

Գալով բնաբանի մարգարէական հատուածին՝ կրկին յիշենք, որ Աստծուն ապաւինողին Տէրն այլ կերպ է զօրացնում: Մեզ հնարաւորութիւն է տալիս ունենալ իսկապէս նոր ուժ՝ Հոգու շնորհը, արծուի փետուրներ ստանալ, որ խորհրդանշում է հոգեւորաբար ճախրել կարողանալը հոգեւոր կեանքի աստուածային բարձունքներում , այս կեանքի վազքի մէջ չհոգնել, գնալ, բայց քաղց չզգալ, եւ կերակրուել Իր անմահական սեղանից:

Ամէն սուրբ Պատարագին մենք էլ, կերակրուելով Աստծու սուրբ Սեղանից՝ այս հոգեւոր վերափոխումն ենք ունենում, եթե աներկբայ հաւատում, ամբողջ սրտով ապաւինում եւ կեանքով վկայում ենք մեր Փրկիչ Աստծուն, Ում փառք յաւիտեանս. ամէն.

Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

Հոգեշահ պատմութիւն սուրբ հայրերից.

Մի եպիսկոպոս ժողովրդին հաղորդութիւն տալու ժամանակ ոմանց տեսաւ սեւ երեսներով, ոմանց՝ հրով այրուած, մի մասին՝ արիւնռուշտ աչքերով, իսկ երկու կանանց, որոնց մասին բամբասանքներ էին պտտւում՝ սպիտակ զգեստներին, ոմանց էլ՝ լոյսով վառուած: Եւ զարմացած՝ հարցրեց Տիրոջ հրեշտակին, որ իր կողքին էր: Հրեշտակն ասաց նրան. «Սեւերը, այրուածները եւ արիւնռուշտները զանազան մեղքերով խոցուածներն են, որոնք յստակ չխոստովանեցին իրենց մեղքերը, իսկ կանայք, որոնց բամբասում էին, չքմեղացան ապաշխարութեամբ եւ սխալներից

Memorial Service will be offered at the Armenian Churches in the United Kingdom and Ireland for Soldiers fallen at Artsakh war

"Greater love has no one than this: to lay down one's life for one's friends." (Jn 15:13)

His Grace Bishop Hovakim Manukyan invites the faithful to join a special prayer service for the soldiers fallen during the Artsakh war. The special service will be held in both London Churches at the end of Divine liturgy on Sunday, December 20th. Divine Liturgy starts at 11.00am.

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Shavarsh and Anita Sahakian and Family for the soul of their Mother and Grandmother the late **ANAHID SAHAKIAN** on the 40the day memorial of her passing, also for the soul of their Parents and Great Grandparents the late **MARIJAN** and **SARKIS DEMIRJIAN**, also for all the old and new deceased members of the **SAHAKIAN** and **DEMIRJIAN** Families.

By the Armenian Community in United Kingdom for the souls of all the **FALLEN ARMENIAN MARTYRS** who sacrificed their lives for our homeland, also for all the innocent civilians who were killed by the enemy's indiscriminate bombing.

By Homenetmen London for all the Homenetmenagan Martyrs the late
YEGHPAYR KEVORK HAJIAN (Եղբայր Գէորգ Հաճեան),
YEGHPAYR KRIKOR GHAZARIAN (Եղբայր Գրիգոր Ղազարեան),
YEGHPAYR ERIK KALESDIAN (Եղբայր Էրիկ Գալստեանին),
YEGHPAYR ARDAG MARDIROSIAN (Եղբայր Արտակ Մարտիրոսեան),
YEGHPAYR HAIG TOURIGLIAN (Եղբայր Հայկ Դեւրիկլեան),
YEGHPAYR ARDAG ISHKANIAN (Եղբայր Արտակ Իշխանեան),
YEGHPAYR ARMEN AROUSDANIAN (Եղբայր Արմեն Առուստամեան),
YEGHPAYR HAROUT PANOIAN (Եղբայր Յարութ Բանոյեան),
YEGHPAYR HAGOP ASTARJIAN (Եղբայր Յակոբ Աստարճեան),
YEGHPAYR MOSIG SEKLEMIAN (Եղբայր Մոսիկ Սեքլեմեան),
on the 40th day memorial of their passing during the last Artsakh war.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)
For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully accepted*:

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

St Yeghiche Parish Council appeals to all members for ***prompt*** payment of their **annual membership dues and generous donations,** thus saving your parish administrative and postage costs.

Please hand in your membership dues and donations to the members of the Parish Council at the side entrance desk of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques pay-able to: ***"St Yeghiche Armenian Church"***. You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.